

դեղձեղով խաղաղականը, եւ անոր կոչումն ասոր տալով՝ «Աղաթը խաղաղականին», որ արդիւնք է ժամուս եւ իր անուան անհաստատութեան, եւ տիկնոջ աղօթամատոյցին առանձնականութեան: Կայ եւ 1375ի օրինակին մէջ, գրուած դարձեալ առանձնականի մը համար: Նոյնպէս էր եւ Սիւնեաց վանքերու մէջ, մինչեւ ժ. զարուս կիկղընէրը, ուր կը վկայէ Գր. Տաթեւացին՝ (1407) թէ զայն «աղօթեմք ի վերայ անկողնոյ եւ ննջեմք, որ է վերջ եւ աւարտ ամենայն ժամուց բոլոր աւուրն» (Ամբ. 340): Իսկ Երուսաղէմի հայ վանքը բնաւ չէր ճանաչեր զայն, որուն համար իր միաբանը վարդան արեւդայ 1365ին թուելով օրուան բոլոր պաշտամունքը, անյիշատակ կը թողու շանգըստեանը: Այսպէս եւ Գր. Սլաթեցին (մեռած 1425ին) եւ վանորայք Սեպուհոյ՝ ժ. զարուս՝ տակաւին անտեղեակ եւ կամ իբրեւ առանձնական՝ անյիշատակ թողած են ժամա իրենց խրատներուն մէջ, ուր կը խօսին հասարակաց աղօթքի մասին (Յաւ. 2, Ը): Կ'երեւի թէ նաեւ թուրք մա Մեծոփեցին, 1432ին, իր սրբադրած ժամադրքին մէջ (այժմ ի Մոնաքոյ) փորձեց «հասարակաց աղօթք» ընել զայն՝ նման միւս ժամերուն. եւ անոր 1465ի օրինակին մէջ (ի Ս. Ղազար) վերջին Փառք Բեգ Տէր Աստուած աղօթքին վրայ գրուած է խորագիրս. «Յաղագս արձակման ժողովրդեան», որ թէ նախկին բնագրին մէջ եւս կար՝ յայտնի չէ չ. Գալէմբեարեանի

յոյժ համառօտ ցուցակէն, բայց հաւանական է: Սակայն չենք կարող հաւատալ թէ թուրքացի օրինակը կարենար յեղաշրջել հասարակաց աղօթքը ժ. զարուս. օրովհետեւ այդպիսի փոփոխումներ երկար ժամանակի կը կարօտէին: Ընդհանրապէս կրնանք հաւանել՝ թէ կատարուած էր այդ ժ. զարուս, ուր «Սրտ. ժամող. կարգաւորութեան» անոր մասնակից կը ըլնէր դասեր. եպիսկոպոս կամ վարդապետ:

Սեւանայ ուխտին հօր՝ Մաշտոցի (թ. զարուս) աշակերտն Ստեփանոս՝ կը պատմէ, թէ նոյն ճգնաւորն «ընդ տիւն եւ ընդ դիշեր ինն կանոն կատարէր» (16): Իններորդը կրնայ սաղմոսականաց միայն կրկնութիւնն ըլլալ. եւ կամ ո՛ր եւ է ինքնահնար աղօթք մը. բայց ոչ մեր Հանգըստեանը, որ չէր կրնար մինչեւ ժ. զարուս անծանօթ մնալ, եւ նոյնիսկ խոսքով մեկնիչին ալ: Նկատելի է դարձեալ՝ որ զայն «կատարէր» Մաշտոց միայն, եւ ոչ թէ ամբողջ եղբայրութիւնը. ապա թէ ոչ՝ յատուկ յիշատակութեան պիտի չարժանանար իր դործն իբր զարմանալի բան մը: Որով վստահ ենք՝ թէ Հանգըստեանը ըստ տեղծուեցաւ ժ. զարուս, եւ մնաց առանձնական մինչեւ ժ. զարուս, ուր հասարակաց դարձաւ:

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ
(Շարունակելի)

(16) Ժողովրդ. թ. 131. Ս. Ղազար 81:

ՆՈՐԱԳԻՒՏ ՆԻԻԹԵՐ

ՊՈՕՇԵԱՆՅ ԿԱՄ ԽԱՂԱՍԿԵԱՆՅ ՄԱՍԻՆ

1954 ին, Լոնտոն գտնուած ատենս, հանդիպեցայ իմ անդամակցած Անգլիոյ եւ Իրլանտայի Արքունի Ասիական Ընկերութեան (Royal Asiatic Society of Great Britain and Ireland) կեդրոնավայրը: Այդ այցելութեանս առթիւ յարգելի մատենադարանապետահին ուշադրութեանս յանձնեց հայերէն շահեկան ձեռագիր մը: Ուշ կեդրոնագ՝ կարմիր կաշեկողքով հատոր մըն էր, որուն կոնակը երկաթագիր գրոշմուած էր ԳԱՍԱՍԱՆԱԳԻՐԻ ԹԱԳԱՅՈՐԱՅՆ ՀԱՅՈՅ ՅՈՐԻՆԵԱԼ Ի ՔՆԷԱՍ ԽՈՒՐՈՎԷ:

Ձեռագրին տիտղոսի էջին վրայ կը կարդանք.

Գաւազանագիրք
որ է

Յուցակ Ազգաբանութեան (թեան) Թագաւոր(ա)նցն Հայոց եւ Նախ(ա)ր(ա)ր(ա)յց եւ Ք(ա)լ(ա)ր(ի) Պայազատ Սպայ(ա)պ(ե)ա(ա)յց եւ այլ(ո)ց: Սկսե(ա)լ ի Յար(ե)թ(ո)յ որդւոյ Նոյի ի երկր(ո)րդ հօրն աշխարհի. ի 2263 թ(ա)կ(ա)նէ աշխարհի մինչեւ ի 1814 թիւ Փրկչին: (եւն եւն.)

Աշխատ(ա)ս(ի)ր(ո)ւթ(եամբ) հար(ա)ղ(ա)տարին Հայրենասէր, Հաւատարիմ եւ Փոյթեռանդն Սրտ(ա)յ(ա)լ Զանաղիր եւ Մեղթեռանդն Սրտ(ա)յ(ա)լ Սեպե(ա)լ խաւարի սաների Գեորգ Մեղեպեղ(ե)կե(ա)ն Խուրով Խաղբ(ա)կե(ա)նց՝ յոգնաշխատ ամ(ե)նայն Եղբորորդւոյ Տ(եառ)ն Սիմէօնի ամ(ե)նայն Հ(ա)յ(ո)ց գերբնորի եւ բազմերախտ Կ(ա)թ(ո)ւղ(ի)կոսի Երեւ(ա)նցւոյ: Ի գրօսանս ազգասիրաց: Ի հայր(ա)պեա(ու)թ(եան) լուս(ա)նկ(ա)ր Սր. Աթ(ո)ռ(ո)յն Էջմիածնի Տ(եառ)ն Եփրեմայ Արժանընտիր եւ Կայսր(ա)պ(ա)կ Ս(ր)բ(ա)ղ(ա)ն(ա)ւ(ու)ր Կ(ա)թ(ո)ւղ(ի)կոսի ամ(ե)նայն Հ(ա)յ(ո)ց, եւ հոգեծնի նոյն(ո)յ մեծին Սիմէօնի:

Թ(ո)ւղ(ի)կոսի ամ(ե)նայն Հ(ա)յ(ո)ց, եւ հոգեծնի նոյն(ո)յ մեծին Սիմէօնի:

Եւ ի վերագրիտողութեան ն(ո)րին փոխ(ա)ն(ո)րդ՝ Սր. Էջմիածնի Մ(ա)յր(ա)յ(ո)յն Նու(ե)ր(ա)կ հիւսս(ա)բն(ա)կ Հ(ա)յ(ո)կ(ա)ղ(ա)նց հ(ա)մ(ա)յնից Առ(ա)ք(ե)լ(ա)յ(ո)րծ Գեորգ Տ(եառ)ն Յօհ(ա)նն(ո)ւ Կայսր(ա)պ(ա)կ Բարձր Ս(ր)բ(ա)ղ(ա)ն Արքեպիսկոպ(ա)կ Բարձր Ս(ր)բ(ա)ղ(ա)ն Արքեպիսկոպ(ա)կ յԱմի Փրկչին 1825. եւ ի մերս Հ(ա)յ(ո)ց 1274 աւարտեալ յԱստրախան:

Ձեռագրին առաջին էջին վրայ նոտրադրով գրուած է.

«Ի 1827 թ(ո)լ ի Ղալար ք(ա)ղ(ա)քոյ ի զննել զսոյն մատենան բարձր Ս(ր)բ(ա)ղ(ա)ն զՅօհ(ա)ննէս Արքեպիսկոպ(ա)կ Կիճակիս հանգ(ո)ւցե(ա)լ Առ(ա)յն(ո)րդին կողմանս ամ(ե)նայն Հ(ա)յ(ո)ց ի նախագաղ(ա)փարն հաւանակ(ա)ն գովութեամբ ձեռագրեալ եւ կնքե(ա)լ ապ(ա)գրե(ա)լ հրամայեաց այսպէս»:

Իսկ բոլորգրով: «զՍոյն զայս մատենան հաւ(ա)տ(ա)ր(ի)մ եւ հարկ(ա)ւ(ո)ր տեսե(ա)լ հրամայեցաք մեծանել ի տիպ ի մերում եւ ի մերս Հայկական լեզու, ուր եւ յաջող համարեալ լիցի: Վիճակաւոր Առաջնորդ Յօհաննէս Արքեպիսկոպոս Հալոյս Ուսաստանեայց:

Տեղի կնքոյ:

(Թէեւ կտր չըջագիծ մը կայ, սակայն կնիք չկայ):

Աւելի վարը անգլիերէն Presented to the Oriental Translation Com. by the Author Prince Hubboff, այսինքն «Նուիրեալ Արեւելեան Թարգմանութեան Ընկերութեան» հեղինակէն. Իշխան Խուրով:

ինձի ծանօթ է այս գործին հրատա-
րակութիւնը:

Հեղինակը, իշխան (Գնէպ) Գէորգ
Մեղիսեղեկեան խորով խաղբեանց (խաղ-
բակեանց), էջ 131 կը գրէ «...նեղեկեան»
ոգի Գէորգ Մեղիսեղեկեան խորով
խաղբեանց նուազած ծառ(ա)յս տեառն ծ(ա)-
ռ(ա)յից»:

Կը վկայուի որ իրմէ, այսինքն իշխան
Գէորգ (Եգոր) խորեանցը (խորովը) Հա-
յաստանի երեսնամեայ անցքերի նկարա-
զրութեան նուիրուած աշխատութիւն մը
ունի ուսերէն: (1) Այս գործը կը խօսի
1779-1809 զէպքերուն մասին եւ հրատա-
րակուած է 1811ին: Գարձեալ այս Գէորգ
խորեանց թողուցած է գրչագիր մը էջ-
միածնի մատենագրանը. «Երգարան եր-
գեցիկ մանկանց եւ յորդորակ սիրահար
դեռավարժից շարահիւսեալ ի ներգեղեալ
ոգի բաղմաշխատ Գէորգ Մեղիսեղեկեան
խորով իշխանէ, յեղորորդեայ Տեառն
Սիմէոնի մեծի ամենայն Հայոց Հայրապե-
տին հանգուցելոյ. 1825 ի Ղզլար»: Իսկ
նոյն գործին Յառաջաբանը ստորագրուած
է Գէորգ Մեղիսեղեկեան խորով խաղ-
բակեան:

Գէորգ խորեանց իր մասին քիչ մը
աւելի տեղեկութիւն կու տայ Պաշտօնացի
կամ խաղբակեանց իր ճիւղագրութեան մէջ
գրելով. «1814: Գէորգ Մեղիսեղեկեան
խ(ո)ւրով խ(ա)ղբ(ա)կե(ա)ն Սըշ(ա)կ(ո)ւնի,
որ սրտատոյժը ջանիւ. բ(ա)յց սգապատե(ա)լ

Առ նորուն Արքայական Բարձր(ո)ւ(թ)ի(ւն) աղէքս
Առ Գէորգ տ(է)ր եւ թագաւոր Աշխարհակալդ կիսագնտի
Ամենողորմ Օգոստափառ յաղթող Արքայդ հզօր գնտի
Ռազատարած ջերմ եռանդեամբ մատչիմ ծառայս իր տր(ո)ւպ Գէւ(ո)րԳ.
Ռամկուհւոյն նման լուծայածեալ բարեբախտ Չեր ան(ա)մր Գէորգ
Գերասիմի Չեր Սը. Աթ(ո)ռով փարիլ չնչոյն օն անդր շատ է
Գորովագութ խնամ Չեր տ(է)ր իմ ցմահ քարչե(ա)լ բռնագատէ
է յիշատակ Չեր համակրաց Տ(է)ր թագաւոր արձանաց
Ի հոգաբարձ կտակատար. զմեր Արքային կտակ լցո

(1) Գիւան Հայոց Պատմութեան, խմբագրեց Գիւտ Քաջանայ Աղանեանց, Գ. Հատոր, Թիֆլիս, 1894 էջ 109.
(2) Գիւան Հայոց պատմութեան, Գ. Հատոր էջ 109.

սրտիւ. լալագին աչօք. Թախծե(ա)լ ան-
ծ(ա)մր, եւ ցաւալի մատ(ա)մրք գրե(ա)ց ցալ
Յիշ(ա)տ(ա)կ(ա)ղբ(ո)ւ(թ)ի(ւն)ս Գիւցագնա-
ցե(ա)լ Տիրապետող(ա)ցն Հայկ(ա)ղ(ա)նց
որք ոչ են՝ եւ ոչ եւս երեւին ոչ թէ տե-
ղիք միայն, այլ մինչ յ(ի)շ(ա)տ(ա)կ(ա)ղբ եւս
այնպ(ի)սե(ա)ց վեհանձն(ա)ց»:

Գէորգ խորեանցի մասին ծանօթու-
թեան փոքր պատառիկ մը եւս ունինք.
«Սիմէոն կաթողիկոսի եղբայր Մեղիսե-
ղեկի որդի Գէորգը, որ իրան Պաշտօնացի
էր անուանում, գնում է Պետերբուրգ, ուր
մտնում է արքունի ծառայութեան. ուս-
ները նորա աղգանունը թարգմանում են
ուսերէն եւ ՊՈՒՇԿԵՆը գտնում է (Պաշ-
տօնացի: Ուսերէն գուր) Գուրով, որ հետե-
հետէ աղաւաղուելով գտնում է Ղուրով,
ապա խորով, ըստ Հայկական վերջաւորու-
թեան՝ խորեանց»:

Ասկէ զատ ծանօթութիւն այս անձին
մասին կը պակսի ինձի:

Իր Պաշտօն սերունդէ ծագման մա-
սին՝ իր կարգին, քիչ վերջ:

Իր կենսագրութեան մասին մեր ծա-
նօթութիւնները փակելէ առաջ՝ աւելորդ
չեմ նկատել հոս հրատարակել երկար ձօն
մը իր գրչէն Արքունի Ասիական Ընկերու-
թեան ձեռագրին մէջ գտնուող:

«Օգոստափառ Ինքնակալ Ամենողորմ
Թագաւոր Մեծազօր Տ(է)ր Կիսագնդի»
ստորագրուած հեղինակէն «ամենան(ա)ստ
մշտ(ա)խ(ո)ն(ա)րհ ծ(ա)ռ(ա)յ իշխան Հ(ա)-
յ(ո)ց Գէորգ խորով»:

Էջ Ը (8) բոլորգիր ձօնը:

Որ Հայկագնացն արքայու(թ)ի(ւն) կանգնելն յուսով Չեղ յանձն արար

Ուստի ով յոյս ով ապաւեն՝ յայն ձեռնարկեալ Տ(է)ր մեծարար

Բամ Արամեան տոհմ Յար(ե)թեան՝ յանձն յուսով ակն ունեցան

Բոսե(ա)լ մաշե(ա)լ առ նորոգ(ո)ւմն՝ գահին Հայոց հաստանն յանգ

Գահ գործել սակս թագադարմիս՝ եւ վեհանձնաց է ինձ բողձալի

Գոնէ զանյայտ ան(ո)ւանսն եւ եթ՝ յիշելն աթթե(ա)լ գոլ ըղձալի

Տիեզերակալ տիեզերագոր ցոյց զՉերդ շնորհ զարմանահրաշ

Տէր մեծազօր օգնեալ տկարիս զի արար զիս աշխատամաշ

Ինքնակալ տ(է)ր ինքնակ(ա)ցն՝ ոչ երեւի ոսկերք եւ կմախ

Ի պատրողիս ցանց որսացե(ա)լ՝ նուիրեալ մահու եղէն կամախ

Եւ այլք ընդ ս(ուր)բս վերապ(ա)տ(ո)ւե(ա)լք՝ աօնին փ(ա)ռօք ան(ո)ւնք նոցա

Չարմացուցին ոմանք զաշ(խարհ)ս՝ որք քաջու(թեամ)ր հանդիսացան

Չօրօք անթուօք տերանց տիրե(ա)լ՝ իբրեւ չածք համարեցան

Եգին ի մտի անմահանալ՝ եւ որոշել ի մարդկանէ

Եւ զանհասից թասն հարկեալ՝ որ Ար(ա)րշին միայն պատկ(ա)ն է

Բաքով անձամբ զօրեղ բաղ(ա)ւ՝ ոստեան ելին ի բնութենէ

Բախձն եւ եղձանձ իւր մ(ա)րդ(ոյ)՝ կարծե(ա)լ կոխեալ ի յինքենէ

Անանց վարկե(ա)լ զաշ(խարհ)ս իւրովքն՝ եւ մեծ պալատ զս(ո)րին փարախ

Անգոն զատմամբ ոչ ծանեան թէ՝ ցնորք եւ շուք է խաբօղն

Կերին արրին ուրախ եղեն՝ բաւ համարեալ զաստիս միայն

Կենցաղոյս գերկ արկե(ա)լ չուեցին՝ ոչ մտածե(ա)լ զհանդերձե(ա)լն այն

Արեանց արե(ա)ց Արքայի մեր՝ հաւատարիմ կտակակատարի

Այցելու տ(է)ր այցարար լեր՝ անգլուխ ազինէ ալժմ արդ

Լեր բարերար աշխարհ(այ)այտ՝ յիշատ(ա)կ(ա)լ ողջոյն ազգի

Լքեալ լուծե(ա)լ եւ ցան եւ ցիր ցրե(ա)լ անտէր Հայոցս ազգի

Գոռ տ(է)ր հայր մեր դոռ իշխ(ա)ն մեր՝ գոռ փրկ(ի)չ մեր լեր եւ յոյս մեր

Գոռ ապաւեն գոռ հովանի՝ գոռ պահպ(ա)նիչ լեր եւ լոյս մեր:

Սկզբնատառերը կը կապեն Ա.Ռ. Գե-
որգ ՏԻԵՉԵՐԱԿԱՆԻ: Իսկ վերջնատա-
ռերը կը կապեն Ի. ԳԵՈՐԳ ԻՇԽԱՆԵ Ե
ԽՆԴԻՐ:

Ո՞վ է այս Գէորգ տիեզերակալը...
Ան անտարակոյս պէտք է նոյնացնել
Կիօրկի վրաստանի թագաւորին հետ, որ
Գահ բարձրացաւ իր հօր Հերակլի մահէն
վերջ 1798ին:

Բախտորոշ ժամանակ մը գահ բար-
ձրացաւ Կիօրկի. սակայն իր հօր կարողու-
թենէն զուրկ, անկարող, հիւանդ եւ տկար
թագաւոր մը եղաւ. հոսկ մեռաւ Թիֆլիսի
մէջ Գեկտեմբեր 28, 1800ին, առանց որեւէ
օգուտ բերելու:

Ուրեմն Գէորգ խորով իր այս ջանք
դրած ըլլալու է Կիօրկի գահ բարձրանա-
լուն առթիւ, այսինքն 1798ին, երբ գուցէ

յոյս մը կար անոր լաւ գործունէութեան:
Գէորգ խորով իր այս ջանքով ակնկալու-
թիւն ունի նախ իբր Հայոց իշխան ճանչ-
ցուելու վրաց թագաւորէն: Յետոյ ակըն-
կալութիւն ունի Հայոց գահին վերահաս-
տատման Կիօրկի կողմէ, եւ անոր շնոր-
հիւ: Վեջապէս կը յուսայ Կիօրկի շնորհիւ
այդ գահին վրայ բազմիլ:

Չեմ գիտեր թէ կա՞ր շարժում մը այդ
օրերուն՝ վրաց շնորհիւ Հայոց գահին վե-
րահաստատման, թէ Գէորգ խորով ինք-
նընտիր թեկնածու եւ նոյն ատեն ինքնա-
գործ Օրիաձեւ «Հայրենասէր» ազգասէր
մըն էր: Նման ձգտումով ինքնընտիր գոր-
ծիչներ, որոնք իշխանական տոհմերու վե-
րագրութիւնով հրապարակ ելած էին, ծանօթ
բազմութիւնով հրապարակ ելած էին, ծանօթ
են: Օրինակ Հ. Հացունիի հրատարակեալ
Լուսինեաններու իբր ժառանգ ներկայացող

ընդհանուր մասին, զոր ինչպէս տեսանք՝ 1492ի տեսնենքը կը նշանակէ, մինչ իրապէս 1273էն վերջ չի կրնար ըլլալ:

Սակայն ինչպէս բացատրել Սիմէոն Կաթողիկոսի առնչութիւնը Գէորգ Խուրովի եւ իր կեղծիքին հետ:

Արդարեւ Սիմէոն Կաթողիկոս կրնար եղած ըլլալ Գէորգ Խուրովի հօրեղբայրը: Կրնայ ըլլալ նաեւ որ Սիմէոն Կաթողիկոսի աշխարհական անունը եղած ըլլայ Խուրբաշխ, թէեւ այսուր այդ մասին վկայութեան չենք հանդիպիր: Սակայն Սիմէոն Կաթողիկոսի կենսագրութեան մէջ կամ այլ վաւերագրութեանց մէջ ան երբեք Պոռեան կամ Խաղրակեան չէ ներկայացուած, թէեւ տեղ մը իր մասին ըսուած է «նա ինքն մասնաւոր իմն իշխան» (4) Սակայն այս անորոշ պատուածներ երբեք մեզի չի կրնար ենթադրել տալ որ Սիմէոն Երեւանցի Պոռեան էր ծագումով:

Սիմէոն Կաթողիկոս մեռաւ 26 Յուլիս 1780 ին: Գէորգ Խուրովի «գրականութիւնը» այսինքն տոգմածառերը, յիշատակագրութիւնները եւայլն բոլորն ալ կը ստեղծուին Սիմէոն Կաթողիկոսի մահէն շատ վերջ: Իր Զօնին թուական նկատեցի 1798, երբ Կիօրկի Վրաց գահը բարձրացաւ. այդ տոնն արդէն իշխանազուն, արքայազուն եւ նոյն իսկ Հայոց թագաւոր ըլլալու յաւակնութիւնները ունէր Գէորգ Խուրով, որ անկէ վերջ իր աստիճանը հիմնաւորելու համար սկսաւ ինքզինքը Պոռեան կամ Խաղրակեան սերունդէ ներկայացնել, մինչեւ Արշակունեաց... տանելով իր ծագումը:

Յաջորդեցաւ ինքզինքը հաստատել տալ Վրաց կամ Ռուսաց արքունեաց մէջ իբր հայ իշխան: Դժբաղդարար որեւէ ապացոյց չունիմ հաստատող կամ ժխտող: Գէորգ Խուրով ինքզինքը կը ներկայացնէ իշխան Խուրով: Սակայն այս իշխան տիտղոսը պաշտօնապէս հաստատուած է թէ ինքնակոչ է՝ չեմ գիտեր: Ծանօթ է կոնդակ մը Յովհաննէս Կաթողիկոս Կարբեցիէ՝

ուղղեալ «ազնիւ աղայ Կարապետ Ղուբովին» Յունիս 10, 1832 թուակիր, ուր Կարապետ Ղուբովը կը կոչուի «Զեռք ազնիւ բարետոգմութիւն» սակայն ոչ իշխան, Պոռեան, Խաղրակեան, եւն: Սյս Կարապետ Ղուբովը եղբայրը ըլլալու է Գէորգ Խուրովին, որ անոր անունը կուտայ իր ուսման տոգմածառին մէջ: Խուրովները կրնային «բարետոգմ» ըլլալ, սակայն ասկէ Պոռեան ցատկելու (թող Արշակունի ըլլալու) կարելիութիւնը դժբախտաբար իրականանալի չէ:

Պոռեան տոգմին կալուածներուն վիճակը եւ իրենց սերունդէն մինչեւ 1705 համադրեալ գոյութիւնը պատճառ եղած է որ ուրիշները յաւակնութիւն ունենան այդ տոգմին կապելու իրենց ծագումը:

Ասոնցմէ նշանաւորագոյնն է Իսրայէլ Օրի, որ 1699 ին կեղծած թուղթերուն մէջ ինքզինքը Պոռեան կը ջանայ ներկայացնել, թէեւ անկէ շատ առաջ Փարիզի մէջ հայ իշխանազուն մը ներկայացուցած էր ինքզինքը, մինչեւ որ նիւթական իւրացումներու պատճառաւ ստիպուեցաւ փախչել անկէ Տիւսէլտօրֆ:

Յետոյ ունինք այս Գէորգ Խուրովը՝ Ունինք նաեւ Պերճ Պոռեանցէ (հեղինակ Կռուածաղիկ, Շահեն, վէպերուն) որ 1880ին ՓՈՐՁ ամսագրին թիւ 10ին մէջ ջանաց ապացուցանել թէ Խուրեան եւ Պոռեան կապը կը սկսի Լաչիով (մեռած 1317 ին): Պերճ Պոռեան՝ ծնած Տէր Առաքելեան, ի զուր կ'աշխատի իր այդ յաւակնութեան համար: Իբր Պոռեանց գերդաստանի ծանօթ եւ ընդունուած յիշատակաւորներուն ոչ մէկուն մէջ կը յիշուին այն անձերը՝ որոնցմէ իբր թէ ծնած կամ յառաջացած են Խուրեան սերունդի անդամներ, ըլլան անոնք մտացածին եւ կամ թէ իրապէս ապրող, երբ Խուրեան տոգմածառերը պատրաստուած են:

Յ. ԳԻՒՐՏԵԱՆ

(4) Անդ - էջ ԽԶ.

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ

ԳՐԶԱԳՐԵՐԻ ԱՄԵՆԱՀԱՐՈՒՄՏ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
«ՀԱՂԱՏԻ Ս. ՆՇԱՆ ՎԱՆՔԻ» ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՎԱՅՃԱՆԸ

1778-1799 P. P.

ԵՒ

Ս. ԻԶՄԻԱԾՆԻ ՎԱՆՔԻ ՎԱԿԵՐԱԳԻՐՆԵՐԻ
ԱՆՆԻՂՃ ՈԶՆԶԱՅՈՒՄՆ ՀԱՂԱՏՈՒՄ

1824 P.

Յովհաննէս Եպ. Սուրենեան Ղրիմեցին եղել է Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանքի առաջնորդ 1824 թ. մինչեւ իր մահը, 13 Դեկտ. (հին տոմարով) 1848 թ. Թաղուած է Ս. Ամենափրկչեան վանքի զանգի արեւելեան մասում:

Սա եղել է գլխաւորապէս եւ բանասէր հոգեւորական, եւ ըստ Մեսրոպ Թաղիադեանցի «Ճամբորդութիւն ի Հայաստան» աշխատութեան՝ էջմիածնում եղել է աստեղադիւր, եւ այդ պաշտօնի բերումով՝ Եփրեմ կաթողիկոսը 1821 թ. էջմիածնից իր հետ տարել է Հաղբատ, ուր մնացել է՝ հաւանօրէն՝ մինչեւ 1829 թ.:

Յովհաննէս Եպիսկոպոսից Ս. Ամենափրկչեան վանքի մատենադարանում կայ մի անտիպ աշխատութիւն, 239 համարի ներքոյ, հետեւեալ խորագրով.

Պատմութիւն

Հոչակաւոր վանից Հաղբատայ

Սր. Նշանին

Հիմնեալ Յարճաւագիրս

Նախնեաց

Այս աշխատութեան մէջ, բացի յառաջաբանից, նա տալիս է Հաղբատի եւ շրջակայքի մասին տեղագրական մանրամասն տեղեկութիւններ, ինչպէս եւ կլիմայի ու բուսականութեան: Նկարագրում է վանքի տեղակայութիւնը եղող գիւղերի, կալուածների եւ հողամասերի մասին. այնուհետեւ նկարագրում է վանքը եւ շրջակայքում գտնուող նուիրական վայրերը. իսկ գրքի վերջում համառօտ կենսա-

գրականներն է տալիս, սկզբից մինչեւ իր օրերը, այնտեղ պաշտօնավարող վանահայրերի մասին: Ըստ իր գրքի յառաջաբանի, մեծ նեղութիւն է կրել վերծանելու կիսամաշ, մամուլապատ արձանագրութիւնները, որոնք էլ այն աստիճան քայքայուած են եղել, որ երբ սանդուղքով բարձրացել է մօտից դիտելու եւ ստուգելու, երբ ձեռքով ցանկացել է մի քիչ մաքրել տառերը, հողի պէս թափուել են: Թէ ի՞նչքան է աշխատել այդ արձանագրութեանց վրայ թող ինքը պատմէ.

«Եւ եղեւ թիւ բովանդակ արձանագրաց Հաղբատայ աւելի քան զհարիւր: Թող զհամառօտ կամ զմիաբառ տապալանադիրս, թող եւ զՍանահնի եւ զայլոց տեղեաց զարձանագրութիւնսն, զոր ուրեք ուրեք յընթացս դործոյս յառաջ բերաք եւ յորոց զմեծ մասն եղաք ի վարդա առաջնորդաց նորին Սանահնի: Սակայն զարանագիրս Սանահնի զբովանդակն չեղաք ձեռնհաս անձամբ գաղափարել կամ սըրձեալով, վասն որոյ եթէ թերութիւն ինչ բազրել, վասն որոյ եթէ թերութիւն ինչ կամ վրիպակը յոմանս ի նոցանէ յայտնեսցին՝ հայցեմ ներողամիտ լինել »:

Մի այլ նեղութիւն էլ է քաշել. մի հըմուտ նկարչի ձեռքով պատկերահանել է տուել Ս. Նշանի վանքը. բայց դժբախտաբար այդ նկարը չի մնացել:

Հաղբատի վանքն ունեցել է եօթն գլխաւոր վանքերի պահեստ.

Երկու վերնախորան՝ բուն տաճարում.

Չորս խորան՝ զանգակատան վերնախորան: